ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2019 թվականի N 81-Ա

ՍԵՎԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Սևակ Գասպարյանը հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի մայիսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տեղ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տեղի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրված էլեկտրային տվյալների Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրում հաշվառված Մերսեդես բենզ մակնիշի 52MP555 պետհամարանիշի ավտոմեքենան հանդիսանում է քաղաքացի Սևակ Գասպարյանի սեփականությունը, ինչը «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Ավտոմեքենայի համար վճարման ենթակա հարկը կազմում է 505.790 ՀՀ դրամ, ինչը 2012-2019թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

2019 թվականի մայիսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի մայիսի 31-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ներկայացել է Սևակ Գասպարյանը:

Համաձայն աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 29.05.2019թ. տրված տեղեկանքի ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի բնակիչ՝ Սևակ Գասպարյանը Մերսեդես բենզ մակնիշի 52MP555 պետհամարանիշի ավտոմեքենայի, համար կատարել է 210.000 ՀՀ դրամի վճարում /2017-2019թթ, անդորրագիր ԳՀԱ N 6506223/:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը,վերացրել է

օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սևակ Գասպարյանի վերաբերյալ 29.05.2019թ. հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու /մինչև 2019թ հուլիսի 29-ը/ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տեղ համայնքի ղեկավարը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սևակ Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. մայիսի 31
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2019 թվականի N 82-Ա

ԱՐԱԳԱԾ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արագած Ղուկասյան հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի մայիսի 31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տեղ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված ելակետային տվյալների Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի /1.953 ՀԱ վարելահող ջրովի, 2.043 հա վարելահող անջրդի, 3.617 հա վարելահող անջրդի, 0,064 հա տնամերձ/ հողամասերը հանդիսանում է քաղաքացի Արագած Ղուկասյանի սեփականությունը, ինչը, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 301.420 ՀՀ դրամ, ինչը 2008-2019թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

2019 թվականի մայիսի31-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հունիսի 4-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի մասնակցել Արագած Ղուկասյանը: Վարչական վարույթի լսումներն իրականացվել են քաղաքացի Արագած Ղուկասյանի բացակայությամբ:

Համաձայն Տեղի համայնքապետարանի աշխատակազմի կողմից 31.05.2019թ. տրված տեղեկանքի Արագած Ղուկասյանը կատարել է 153.000 ՀՀ դրամի վճարում /անդորրագրեր՝ ԳՀԱ N 6506215, ԳՀԱ N 6506218/:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը,ում հասցեագրված է լինելու վարչական ակտը,վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ

պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արագած Ղուկասյանի վերաբերյալ 31.05.2019թ. հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու /մինչև 2019թ հուլիսի 31-ը/ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տեղ համայնքի ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 4
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2019 թվականի N 83-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստան Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Լիդա Միքայելյանի 05.06.2019թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 09-101-0038-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 38-րդ փողոց թիվ 7 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 5
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2019 թվականի N 84-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստան Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Լիդա Միքայելյանի 05.06.2019թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 09-101-0043-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 24-րդ փողոց թիվ 13 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 5
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» հունիսի 2019 թվականի N 85-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստան Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Սեյրան Մկրտչյանի 06.06.2019թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 09-101-0041-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 27-րդ փողոց թիվ 1 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 6
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» հունիսի 2019 թվականի N 86-Ա

ՋԱՆԻԲԵԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ջանիբեկ Աղաբեկյան հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի հունիսի 5-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տեղ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված ելակետային տվյալների Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի (1.345 Հա վարելահող ջրովի, 1.166 Հա վարելահող անջրդի, 1.974 Հա վարելահող անջրդի, 0.036 Հա տնամերձ) հողամասերը հանդիսանում են քաղաքացի Ջանիբեկ Աղաբեկյանի սեփականությունը, ինչը, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 229.820 ՀՀ դրամ, ինչը 2008-2019թթ. ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

2019 թվականի հունիսի 5-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի հունիսի 7-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով Ջանիբեկ Աղաբեկյանը ներկայացել է Տեղի համայնքապետարան:

Համաձայն Տեղ համայնքապետարանի աշխատակազմի կողմից 05.06.2019 թ. տրված տեղեկանքի Ջանիբեկ Աղաբեկյանը կատարել է 100.000 ՀՀ դրամի վճարում (անդորրագիր՝ ԳՀԱ N 6506241):

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը,ում հասցեագրված է լինելու վարչական ակտը,վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնենով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ջանիբեկ Աղաբեկյանի վերաբերյալ 05.06.2019թ. հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու /մինչև 2019թ օգոստոսի 5-ը/ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տեղ համայնքի ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 7
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» հունիսի 2019 թվականի N 87-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 31-Ն որոշման 8-րդ կետի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում.

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժնի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածը նվազեցնել 100,0 հազ. դրամով և 4251 /շենքերի, կառույցների ընթացիկ վերանորոգում/ հոդվածով նախատեսել 100,0 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 11
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» հունիսի 2019 թվականի N 88-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ, 42-րդ հոդվածներով, Հայաստան Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 0,1470 հա հողամասին տրամադրել հասցե՝ <<Սյունիքի մարզ, Տեղ համայնք, Տեղ գյուղ 13-րդ փողոց, թիվ 6 հողամաս>>:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 11
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2019 թվականի N 89-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 23-րդ կետի դրույթները և Տեղ համայնքի ավագանու 12.04.2019թ. թիվ 18-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդային հանձնաժողովի 13.06.2019թ. արձանագրության արդյունքներով, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող <<Կորնիձոր գյուղ, Գոմատեղերի թաղամաս, թիվ 3/3>> հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքը, որը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, /ծածկագիր **09-052-0113-0057,** վկայական N **28022019-09-0027**/, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով 635000 /վեց հարյուր երեսուն հինգ հազար / ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթած մասնակից՝ Արա Վաչագանի Պետրոսյանին, /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Կոռնիձոր փող. 4 տուն 24, անձնագիր՝ AM 0782119 տրված 28.06.2012թ. 032-ի կողմից/, այսուհետ՝ Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը վճարել Տեղ համայնքի բյուջեի N 900285121019 գանձապետական հաշվին:
3. Հողատարածքի համար ձևավորված գինը վճարելուց հետո 2-օրյա ժամկետում Գնորդի հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից հետո ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում՝ պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 13
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«13» հունիսի 2019 թվականի N 90-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 23-րդ կետի դրույթները և Տեղ համայնքի ավագանու 12.04.2019թ. թիվ 18-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդային հանձնաժողովի 13.06.2019թ. արձանագրության արդյունքներով, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող <<Կորնիձոր գյուղ, 2-րդ փողոց, թիվ 2/1>> հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատարածքը, որը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, /ծածկագիր **09-052-0038-0006** վկայական N **29032019-09-0022**/, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով 63000 /վաթսուն երեք հազար / ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթած մասնակից՝ Արմիկ Համբարձումի Ոսկանյանին, /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Կոռնիձոր փող. 2 տուն 2, Ն.ք. 003814894 տրված 31.10.2014թ. 032-ի կողմից/, այսուհետ՝ Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը վճարել Տեղ համայնքի բյուջեի N 900285121019 գանձապետական հաշվին:
3. Հողատարածքի համար ձևավորված գինը վճարելուց հետո 2-օրյա ժամկետում Գնորդի հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից հետո ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում՝ պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2019թ. հունիսի 13
գյուղ Տեղ